ՑԵՂԱՍՊԱՆՆԵՐԻՆ ԵՒ ՆՐԱՆՑ ՀՈՎԱՆԱՒՈՐՆԵՐԻՆ ՄԵՐԿԱՑՆՈՒՄ ԵՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐԽԻՒԱՑԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Նորայր Սարուխանեան

Վերջին տարիների պատմահրապարակախօսական, գիտահանրամատչելի յօդուածներով, արխիւային փաստաթղթերի հրապարակած իր ժողովածուներով, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր (1996 թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս) Վարդգէս Միքայէլեանը կրկին հաստատեց գիտութեան ու քաղաքականութեան մէջ կեղծիքի ու փարիսեցիութեան դէմ պայքարի անհաշտ գիտնական-քաղաքացու իր ինքնատիպութիւնը: Այդ է վկայում գիտնականի նաեւ «Հայկական հարցը եւ հայերի ցեղասպանութիւնը Թուրքիայում (1913-1919)» ժողովածուն՝ կազմուած կայզերական Գերմանիայի ԱԳՆ Քաղաքական արխիւի նիւթերի հիման վրա[1]: Մեծածաւալ փաստաթղթերի այս ռուսերէն ժողովածուն կուռ է՝ մեթոդական եւ հետեւողական պատմական ժամանակագրութեան տեսակէտից, կարեւոր մի առաւելութիւն, որի գաղտնիքը, կարծում ենք, այն է, որ ժողովածուի ե՛ւ կազմողը, ե՛ւ գլխաւոր խմբագիրը, ե՛ւ առաջաբանն ու ներածութիւնը գրողը, նոյն ինքն է՝ Վարդգէս Միքայէլեանը:

Ժողովածուի առաջաբանում եւ ընդարձակ ներածութեան մէջ գիտնականը ցոյց է տուել, որ առաւել շատ վերջին ժամանակներս թուրքական կառավարող շրջանները, պաշտօնական եւ ոչ պաշտօնական պատմագրութիւնը, Թուրքիայի գրաւոր եւ բանաւոր հրապարակախօսութեան ամբողջ կորպուսը միաճայն ջանում են «ապացուցել» անապացուցելին, այն է՝ Օսմանեան կայսրութիւնում հայերի ոչ մի ցեղասպանութիւն երբ չի եղել եւ չէր էլ կարող լինել, այլ, ընդհակառակը, հայերն են կազմակերպել թուրքական ջարդեր... Այնուհետեւ, նրանք անգլիական, ֆրանսիական, ամերիկեան արխիւային փաստաթղթերը համարում են միտումնաւոր, քանի որ դրանք թուրք-գերմանական հակադիր բլոկ-միաւորման երկրների արխիւներ են:

Ստեղծուած կացութեան մէջ, բնական է, առաջնահերթ նշանակութիւն են ստանում կայզերական Գերմանիայի արխիւներից, եւ առաջին հերթին նրա արտաքին գործերի նախարարութեան քաղաքական ֆոնդի արխիւներից, պաշտօնական եւ ոչ պաշտօնական փաստաթղթերի հրապարակումը, մի երկիր, որի կառավարութեան յանցաւոր թողտուութեամբ տեղի է ունեցել 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը:

Նման դէպքում «Առաջին աշխարհամարտում Թուրքիային թշնամի պետութիւնների փաստաթղթերը» կորցնում են իրենց ամէն կարգի ուժն ու իմաստը: Զեռնամուխ լինելով դժուարին, բայց շատ կենսական այս գործին, ակադեմիկոս Վարդգէս Միքայէլեանը Յոհաննէս Լեփսիուսի 1919 թ. Պոտսդամում հրատարակած «Գերմանիան եւ հայերը» (գերմաներէն) շատ արժէքաւոր ժողովածուում նկատում է երկու ոչ միտումնաւոր բացթողում: Առաջին, որ Լեփսիուսի կողմից ժողովածուն կազմելու ժամանակ Գերմանիայում տիրում էր խիստ գրաքննութիւն եւ գերմանա-թուրքական ալեանսի բացայայտ պաշտպանութիւն, ուստի կազմողն անհաս է եղել թուրքական յանցագործութիւնները բացայայտող շատ փաստաթղթերի. երկրորդ, որ այդ փաստաթղթերի մի մասը կամ կրճատուել է գրաքննութեան, կամ էլ վերջինիս պահանջով՝ հեղինակի կողմից: Հիմնականում այս եւ սրանից ածանցուող պատճառներով Լեփսիուսի ժողովածուից բացակայում էին նաեւ հիւպատոսների շատ կարեւոր հաղորդագրութիւնները եւ այնպիսի նշանաւոր դէմքերի հաղորդագրութիւնների մի մասը, ինչպիսին էր Հալէպում Գերմանիայի հիւպատոս Ռեսլերը, որը 1910-1918 թթ. զբաղեցնելով այդ պաշտօնը՝ ժամանակի ամենաիրազեկ դէմքերից մէկն էր:

Ի՞նչ անել, ինչպէ՞ս ծանօթանալ եւ ծանօթացնել գիտական եւ ընթերցող լայն հասարակայնութեանը կրճատուած-աղաւաղուած եւ ընդհանրապէս չհրապարակուած այն փաստաթղթերի հետ, որոնք ննջում էին եւրոպական տէրութիւնների մէջ հայոց ցեղասպանութեանն ամենամեծ յանցակից կայզերական Գերմանիայի արխիւներում: Ահա կարեւոր մի խնդիր, որի լուծման համար Վարդգէս Միքայէլեանի թափած ջանքերը ի վերջոյ աւարտուում են յաջողութեամբ: 1989 թ. ստանալով թոյլատուութիւն, գիտնականը երեք ամսով մեկնում է Բոնն, եւ գերմանական արխիւներում իր ժողոված փաստաթղթերը լիովին արդարացնում են նրա սպասելիքները: Դրանք աւելի քան 3500 միկրոկադրեր են, որոնցից 1000-ից աւելին տեղ են գտել նրա կազմած ժողովածուի մէջ: Հեղինակը գրքում գետեղել է նաեւ Պոտսդամի արխիւից հաւաքած առանձին նիւթեր:

Վ. Միքայէլեանը արխիւային փաստաթղթերը եւ նիւթերը պայմանականօրէն խմբաւորել է թեմատիկ՝ շուրջ 13 բնութագրումների ներքոյ: Ահա դրանցից մի քանիսը՝ Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների անցկացման հարցի վերաբերեալ 1913-1914 թթ. Կ. Պոլսում Անտանտի եւ Եռեակ դաշինքի 6 տէրութիւնների դեսպանութիւնների ներկայացուցիչների բանակցութիւնները, Հայերի բնաջնջումը Թուրքիայում 1915-1918 թթուականներին, հարիւր հազարաւոր հայերի մահմեդականացումը, զօրակոչուած հայերի զինաթափումն ու ոչնչացումը, բռնագաղթեցուող հայերի նկատմամբ թուրքական կանոնաւոր զօրքերի եւ ուազակախմբերի վայրագութիւններն ու բռնութիւնները, հարիւր հազարաւոր կեանք հնձող քաղցը, ցուրտն ու համաճարակային հիւանդութիւնները, ցեղասպանութեան հեղինակների «արդարացումները» մերկացնող գերմանական դեսպանների, հիւպատոսների եւ այլ պաշտօնեաների, հիւպատոսների գերմանական եւ ոչ պաշտօնական դէմքերի զեկուցագրերն ու հաշուետուութիւնները, որոնք հաստատում են փաստերն այն մասին, որ հայ բնակչութեան ցեղասպանութիւնն ու բռնագաղթը իրականացուել են երիտթուրքական կառավարութեան, այլ սինքն՝ երիտթուրքական կոմիտէի կողմից նախօրօք մշակուած եւ ընդունուած ծրագիր-պլանի համաձայն, հայերի ցեղասպանութեան գործում կայզերական Գերմանիայի մեղսակցութիւնը... եւ այլն: Փաստաթղթերը մերկացնում են իմպերիալիստական Գերմանիայի հակահայկական ընթացքը, ամենից առաջ այն, որ Արեւմտեան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցում Գերմանիան 1913-1914 թուականներին անսքող պաշտպանում էր Թուրքիային ընդդէմ Ռուսաստանի:

Արդէն իսկ 1913 թուականի մարտի 13-ին Գերմանիայի կանցլեր ֆոն Բեթման-Հոլուեգին դեսպան Վանգենհայմի՝

© National Library of Armenia

«Ռուսական ագիտատորների քայքայիչ գործունէութիւնը, որոնք փորձում են ամէնուրեք գրգռել հայերի յուզումները» Կ. Պոլսից յղուած զեկուցագրից պարզ երեւում է, որ Թուրքիայի հաւատարիմ դաշնակիցը մինչեւ վերջ պայքարելու է Ռուսաստանի կողմից առաջադրուած բարենորոգումների ծրագիրը խափանելու համար[2]: Բացայայտօրէն դուրս գալով Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների ռուսական նախագծի դէմ, Գերմանիան անտեսում եւ ոտնահարում էր հայերի իրաւունքները իրենց բազմահազարամեայ հայրենիքի հայաբնակ տարածքների նկատմամբ, ամէն կերպ բարդացնում եւ խճճում էր հարցի լուծումը: Գերմանիան Թուրքիայի թիկունքին էր կանգնած ցեղասպանութեան ծրագրի մշակման եւ իրականացման ողջ ժամանակաշրջանում:

Հեղինակը դա հիմնաւորում է արխիւային նիւթերի վրայ խարսխուած ժողովածուի ներածութեան առաջին էջերում: Ցետադարձ հայեացքով ընթերցողը լիովին պատկերացում է կազմում, թէ ինչպէս Գերմանիան, մինչեւ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի աւարտը, ի տարբերութիւն ռազմական տեսակէտից աւելի հզօր «առաջին կարգի» տէրութիւնների՝ Մեծ Բրիտանիայի եւ Ռուսաստանի, առաւելագոյնս չէր զբաղւում Արեւելեան հարցով: Անգամ 1870-1871 թթ. Ֆրանսիային պարտութեան մատնելուց յետոյ էլ, իրատեսօրէն գնահատելով Գերմանիայի հնարաւորութիւնները, Օտտո Բիսմարկը հիմնականում սահմանափակւում էր մայրցամաքային քաղաքականութեամբ ու արտաքին քաղաքական զսպուածութեամբ Արեւելքում: Դրա հետ մէկտեղ նա կարեւոր էր համարում անգլո-ռուսական դիմակայութեան պահպանումը: Հէնց այդ պատճառով էլ, երբ ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի յաղթանակից յետոյ Անգլիայի հետ երկկողմ համաձայնագրի հնարաւորութիւն ստեղծուեց (1878 թ. մայիսի 30-ին կնքուեց անգլո-ռուսական համաձայնագիրը), Գերմանիան քիչ դեր չխաղաց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու ուղղութեամբ՝ Ռուսաստանի յաջողութիւնները նուազագոյնի հասցնելու միտումով: Այդ նպատակով հրաւիրուեց Բեռլինի կոնգրեսը (որի հրաւիրմանը մեծ դեր խաղաց նաեւ աւստրո-անգլիական զօրեղ կոալիցիայի ճնշումը), որի նախագահն էր գերմանական կայսրը:

Արեւմտահայերի համար Բեռլինի կոնգրեսը նշանակում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ յօդուածով թուրքերի կողմից տրուած վարչական բարենորոգումների եւ քրիստոնեայ բնակչութեան պաշտպանութեան խոստումների ճակատագրական ձախողում եւ Ռուսաստանի հովանաւորութիւնը պետութիւններին «համատեղ պատասխանատուութեամբ» փոխարինում, որոնք այդպէս էլ չկատարեցին Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի պայմանները:

Թուրքիայում արեւմտահայերի 1894-1896 թուականների կոտորածները մի որոշ ժամանակ մթագնեցին գերմանա-թուրքական յարաբերութիւնները: Բայց շատ շուտով թուրքերի օգնութեամբ «առաջին կարգի համաշխարհային տէրութիւն» դառնալու Գերմանիայի ցանկութիւնը դասուեց ամէն ինչից վեր, բարոյական նորմ հռչակուեց «Նպատակը արդարացնում է միջոցը» կարգախօսը:

Ռայխսկանցլեր Խլոդուիգը գտնում էր, որ Գերմանիան չպէտք է վատացնի յարաբերութիւնները Թուրքիայի հետ «ինչ-որ հայկական անկարգութիւնների»

պատճառով, իսկ արտգործնախարարութիւնը մամուլին յայտնում էր, թէ իր կառավարութիւնը հայերի համար չի միջամտի Թուրքիայի քաղաքականութեանը: Ժամանակի թրքամէտ հրապարակախօսները նոյնիսկ ընդունում էին «թուրքերի ինքնապաշտպանութեան իրաւունքն» ընդդէմ հայերի, իսկ կայզեր Վիլհելմ 2-րդը Կ. Պոլիս կատարած իր այցի ժամանակ ընդգծեց արիւնարբու Աբդուլ Համիդ 2-րդ սուլթանի հետ իր բարեկամութիւնը: Գերմանական հանրային կարծիքը 19-րդ դարի վերջում գերազանցապէս թրքամէտ էր: Դրան նպաստում էին տնտեսական եւ քաղաքական այն շարժառիթները, որոնք օրօրում էին մեծ Գերմանիայի գաղութատիրական պատրանքների եւ աւելի զուսպ «անուղղակի համաշխարհային քաղաքականութեան» ու «լիբերալ» կամ «կուլտուրական իմպերիալիզմի» միջեւ, ինչպէս ազգային-լիբերալ դիրքերից քարոզում էին ազդեցիկ որոշ քաղաքագէտներ (Ֆրիդրիխ Նաուման եւ ուրիշներ): Գերմանական խորամանկող դիւանագիտութիւնը ցուցադրաբար հեռանալով Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի՝ Օսմանեան կայսրութեան անմիջական բաժանման բացայայտ ծրագրերից՝ Թուրքիային ներկայանում էր որպէս նրա մշտական ու հաւատարիմ դաշնակից: Ելնելով այն համոզումից, որ Օսմանեան կայսրութեան ամէն մի թուլացում հակասում է Գերմանիայի տնտեսական եւ քաղաքական շահերին, գերմանական առաջատար քաղաքագէտների մեծ մասը հետեւողականօրէն դիտում էր որպէս վտանգաւոր երեւոյթ Ռուսաստանի ձեռքբերումները Եւրոպայում եւ Ասիայում: Նոյնիսկ այն փոքրիկ ազդեցիկ գործիչները (հրապարակախօս Պաուլ Ռորբախ եւ ուրիշներ), որոնք հանդէս էին գալիս հայերի պաշտպանութեամբ, արտայայտելով գերմանական իմպերիալիզմի շահերը, գտնում էին, որ տնտեսական ներթափանցման, ճանապարհների շինարարութեան համար որպէս «կուլտուրական տարր» Գերմանիայի համար ձեռնտու է, որպէսզի հայերը գաղթեցուեն Միջագետք՝ նոր տարածքները՝ նօսր բնակեցուած բազմի երկաթգծի շրջակայքը[3]:

1913 թուականից (նոյեմբերից) գերմանա-թուրքական յարաբերութիւնների մէջ ուժգնաւ ռազմական դաշինքը, որը դարձաւ Գերմանիայի համար 19-րդ դարի 30-ական թուականներին, երբ գեներալ Հելմուտ Ֆոն Մոլտկէն 1835-1839 թուականներին ծառայում էր սուլթանական արքունիքում: Աւելի ուշ նրան է հետեւում գեներալ-ֆելդմարշալ կոլմար Ֆոն դեր Գոլցը, որին երիտթուրքերը վերստին հրաւիրեցին 1909 թուականի ապրիլին՝ թուրքական ցամաքային զօրքերը վերակառուցելու-մարզելու համար: 1913 թուականի դեկտեմբերին մեւնոյն նպատակով գեներալ Օտտո Լիման Ֆոն Սանդերսի գլխաւորութեամբ թուրքիա ժամանեց զինուորական առաքելութիւն, որն իր մէջ ընդգրկում էր մի քանի տասնեակ սպաներ եւ երեք հազար զինուոր (պատերազմի վերջում այդ «առաքելութեան» սպաների թիւը հասաւ 800-ի, իսկ զինուորների թիւը՝ 25 հազարի): 1914 թուականի օգոստոսի 2-ին ստորագրուեց ռազմական աջակցութեան մասին երկկողմ համաձայնագիրը, որը նախ եւ առաջ ուղղուած էր Ռուսաստանի դէմ: Այն ժամանակ, երբ Գերմանիան նախապատրաստում էր թուրքական ցամաքային զօրքերը Ռուսաստանի դէմ ռազմական գործողութիւնների, գերմանական արտգործնախարար Ֆոն Յագովը, տակտիկական նկատառումներից ելնելով, դէմ էր Թուրքիայի 1912-1913 թթ. Բալկանեան պատերազմների սկզբից, իւրատեսակ երկակի

© National Library of Armenia

ռազմավարութեան շրջանակներում ջանում էր արեւմտահայերի համակրանքը Ֆրանսիայից ու Անգլիայից շեղել Գերմանիայի կողմը: Հայերի մէջ գերմանական մշակութային ազդեցութեան մասին հոգատարութեանն էր ծառայելու գերմանա-հայկական ընկերութիւնը[4]:

Դրանից մէկ տարի առաջ Գերմանիան, առաջին անգամ, ակտիւօրէն հանդէս էր եկել յօգուտ «հայկական բարենորոգումների»՝ չցանկանալով այլեւս այդ գործը թողնել Անտանտի երկրներին[5]: 1913 թուականի յուլիսին, դեսպանաժողովի ճախողումից յետոյ, գերմանական դեսպան Հ. Վանգենհայմը առաջարկում է Գերմանիայի միջնորդութիւնը թուրքական ղեկավարութեան հետ ճախողուած բանակցութիւններում: Որպէս միջնորդ պետութիւն, Գերմանիան արդ Ռուսաստանի հետ սկսեց աշխատել բարենորոգումների փոխզիջողական տարբերակի վրայ, որի արդիւնք ռուս-թուրքական 1914 թ. յունուարեան համաձայնագիրը արեւմտահայութեանը ոչինչ չտուեց: Եւ չէր էլ կարող տալ, առջեւում պատերազմն էր:

Օսմանեան կայսրութիւնում 1915 թուականին սկսուած արեւմտահայութեան կոտորածները անսպասելի չէին Գերմանիայի համար: Աւելին, Գերմանիան սկզբունքօրէն օրինական էր համարում քաղաքականապէս «անվստահելի» հայերի բռնի արտաքսումը ռազմական գործողութիւնների շրջաններից: Թրքամէտ դեսպան Հանս Վանգենհայմը օրինաչափ էր համարում թուրքերի «պաշտօնական միջոցառումները» նրանց սպառնացող հայկական ապստամբութեան դէմ[6]:

Փաստաթղթերը ցոյց են տալիս, որ Գերմանիայի գիտութեամբ եւ հովանաւորութեամբ, տակաւին պատերազմից շատ առաջ, Թուրքիան նախապատրաստում էր կոտորածները: Գերմանական դեսպանի եւ էրզրումի փոխհիւպատոս Անդերսի հեռագրերը հաստատում են, որ գերմանական իշխանութիւնները շատ լաւ գիտէին, թէ ուր են տանելու քրդական յուզումները[7]: Ուստի բոլորովին անանկ են գերմանական պաշտօնական դիւանագիտութեան եւ պատմագրութեան այն պնդումները, թէ իբր Գերմանիան պատերազմի նախօրեակին հայկական հարցում վարել է չեզոք քաղաքականութիւն: Դա հերքում էր անգամ Թուրքիայում գերմանական դեսպանը, բայց բաւականին ուշ, 1915 թուականի յուլիսի 7-ի զեկուցագրում կանցլերին գրելով՝ «Թուրքական կառավարութիւնը փաստօրէն թուրքական պետութիւնում հայ ազգին ոչնչացնելու նպատակ է հետապնդում»[8]: Գերմանական դեսպանի մտածողութեան կերպափոխման համար կային բոլոր նախադրեալները: Հայերի ցեղասպանութեան թուրքական հրեշաւոր ծրագրերի մասին պատերազմի նախօրեակին եւ սկզբին բացայայտ գրում էին Թուրքիայում գերմանական հիւպատոսներ Ռեսլերը, Հոֆմանը, Շոյնբեր-Ռիխտերը, Բիւգէն եւ ուրիշներ[9]: Բայց միեւնոյն է, գերմանական պետական քաղաքականութեան շահից բխող մտածողութիւնը չէր մթագնում եւ չէր խոտորում: Նոյն գերմանական դեսպանը նշում էր, որ թուրքական «պատժիչ միջոցառումները» օրինական են, եւ լոկ նախազգուշացնում էր Թուրքիայի միջազգային հեղինակութեան հնարաւոր անկման մասին, որին կարող են յանգեցնել վերահսկողութիւնից դուրս զանգուածային տեղահանութիւնները: Իսկ թուրքական իշխանութիւնները, ինչպէս արդէն ակնարկել ենք, համաշխարհային

հասարակական կարծիքը մոլորեցնելու նպատակով, մշակում եւ տարածում էին ստայօդ լուրեր, թէ իբր թուրքերին կոտորում են «հայկական աւազակախմբերը»: Թուրքական պարզունակ քարոզչութիւնը, բարեբախտաբար, երբեմն-երբեմն հանդիպում էր աշխարհի ողջախոհութեան ընդդիմութեանը: Այսպէս. Արեւելեան Անատոլիա այցելած Աւստրո-Հունգարական մամուլի կենտրոնի ներկայացուցիչ, հրապարակախօս Ստեփան Շտայները իր կառավարութեանն ուղարկած զեկուցագրում մանաւանդ ամէն ինչ էր «հայերին աշխարհում ամենամեծ յանցագործները» եւ թուրքերին «հայերի անմեղ զոհեր» ներկայացնելու թուրքական իշխանութիւնների ստորութիւնները[10]:

Գերմանիան ոչինչ չձեռնարկեց՝ խանգարելու Օսմանեան կայսրութիւնում հայոց ցեղասպանութեան իրագործմանը: Պաշտպանելով իր դաշնակցին՝ Գերմանիան նոյնիսկ փորձեց թուրքական «պատասխան միջոցառումների» համար մեղադրել Անտանտին, որը, իբր, հայերին տրամադրում էր Օսմանեան կայսրութեան դէմ: Պատերազմի ժամանակ ամէն մի հաղորդագրութիւն հայերի եւ Հայկական հարցի մասին Գերմանիայում անպայման ենթարկւում էր զինուորական գրաքննութեան: Այդ իսկ պատճառով հումանիստական Գերմանիայի ձայնը շատ աղօտ էր հնչում կամ համարեա լուռ էր:

Թուրքիայի եւ Գերմանիայի կառավարող շրջանները տրորել էին բարոյականութեան ու ամօթի բոլոր նորմերը: Հայկական կոտորածների ամենաեռուն շրջանում, 1915 թ. աշնանը, նրանք էէին խորշում կ. Պոլսում հիմնելու «Թուրքգերմանական բարեկամութեան տուն», որի նախագահն է դառնում հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշան: Համանման «տուն» բացուեց նաեւ Բեռլինում: Դա քաղաքակիրթ ազգի կառավարութեան եւ թուրքական ջարդարարների մարտահրաւէրն էր համաշխարհային հասարակայնութեանը, մի մարտահրաւէր, որում մարմնաւորուեց Գերմանական իմպերիամարմնաւորուեց Գերմանական իմպերիալիզմի եւ թուրքական դեսպոտիզմի անամօթութիւնը[11]:

Ժողովածուի փաստաթղթերը յամառ մեղադրականներ են: Դրանք ցոյց են տալիս, որ վաղ թէ ուշ ճշմարտութիւնը կը յաղթանակի, եւ կեղծարարները կը կանգնեն պատմութեան դատաստանի առջեւ, որ աշխարհում ոչ մի օրէնք (այդ թւում նաեւ վաղեմութեան իրաւունքը) չի կարող փրկել մարդասպաններին, վերջինների չի կարելի զիջել կամ ներել: Ինչպէս նկատել է գերմանացի մեծ հումանիստը՝ Ց. Լեփսիուսը, մարդկութիւնը չի կարող երկար հաշտուել այդ մեծ ոճրագործութեան հետ, ոճրագործները պէտք է պատժուեն, իսկ տուժածները՝ հատուցուեն:

Ժողովածուում ցոյց է տրւում, որ Գերմանիայի հակահայկական պահուածքը փոփոխութիւն չկրեց նաեւ այն ժամանակ, երբ թուրքական զօրքերը 1918 թուականին, օգտուելով ռուսական զօրքերի բարոյալքումից եւ քայքայուածութիւնից, Կովկասեան ճակատի փլուզումից, ամբողջ ճակատով անցան յարձակման: Փաստաթղթերը վկայում են, որ Էնվեր ու Թալեաթ փաշաները, զօրքերի հրամանատար վեհիք փաշան թուրքական զինուորական ծրագրերը քողարկում էին ռուսական զօրքերի կողմից գրաւուած տարածքներում «հայկական բարբարոսութիւններին վերջ տալու», «քաղաքակրթութիւնը եւ թուրք բնակչութեանը պաշտպանելու» կեղծ կարգախօսներով:

© National Library of Armenia

խօսներով: Այստեղ էլ թուրքական զաւթիչներին պաշտպանում էին «քաղաքակրթուած» գերմանացիները: Արեւմտահայաստանն անվերապահօրէն դիտելով որպէս Թուրքիայի արեւելաանատոլիական գաւառներ, Բրեստի բանակցութիւնների ժամանակ գերմանական պատուիրակութեան ղեկավար Ռոզենբերգը փորձում էր այդ հարցադրումը հաստատել թուրք բնակչութեան «դիմումներով» եւ Արդահանի, Կարսի ու Բաթումի օկրուգներում բնակուող մահմեդականների «ճնշուած» վիճակով... Օգտուելով Ռուսաստանի «աննպաստ» վիճակից եւ Գերմանական խմբաւորման առաջատարի համակողմանի աջակցութիւնից, թուրքերը Արեւելեան Հայաստանում եւ Անդրկովկասի հայաբնակ վայրերում շարունակեցին հայերի ցեղասպանութեան իրենց որդեգրած քաղաքականութիւնը՝ մահ սփռելով ամենուրեք...

Ներխուժելով Թիֆլիսի եւ Երեւանի նահանգների տարածքը եւ գրաւելով Ալեքսանդրապոլը, նրանք Սարդարապատի մօտ հանդիպեցին հայկական կանոնաւոր զօրամասերի եւ աշխարհազօրի դիմադրութեանը: Հայ ժողովուրդը տոկալ կարողացաւ... Նա Սարդարապատում եւ Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի վճռորոշ գօտեմարտերում դարաւոր ոսոխին ջախջախեց եւ ետ շպրտեց: Այդ ճակատամարտերի հետեւանքով թուրքերը չկարողացան ներխուժել Արարատեան դաշտ ու Երեւան եւ ցեղասպանութիւն իրագործել ամբողջ Արեւելեան Հայաստանում:

1917-1918 թթ. Կ. Պոլսում Գեմանիայի դեսպան Բերնսդորֆը 1918 թուականի մայիսին, Հայաստանի Հանրապետութեան ստեղծման երրորդ օրը, իր երկրի արտաքին գործերի նախարարութեան ուղարկած հեռագրում յայտնում էր, թէ «ինքնուրոյն Հայաստան ստեղծելու» գաղափարը առաջ կը բերի թուրքերի դիմադրութիւնը: Նրանք չեն ցանկանում իրենց սահմանների վրայ մահացու հակառակորդ ունենալ...»[12]: Եւ այդ «մահացու հակառակորդի» դէմ թուրքերն արեցին իրենցից կախուած ամէն ինչ... Նրան ոչնչացնելու համար երիտթուրքերի ջանքերը ապարդիւն անցան, բայց քեմալականները կարողացան նրանց կիսատ գործը հասցնել աւարտի... Ներդնելով իրենց «ծանրակշիռ» բաժինը:

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտութիւնից յետոյ գերմանական սուզանաւը Թուրքիայից դուրս բերեց երիտթուրքերի ղեկավար գործիչներին, այդ թւում՝ Էնվերին, Թալեաթին, Ջեմալին եւ Նազըմին: Գերմանական կառավարութեան համաձայնութեամբ Էնվերն ու Թալեաթը յայտնուեցին Բեռլինում: Անգամ այս դէպքում Գերմանիան հաւատարիմ գտնուեց իր դաշնակցին:

Առաջին համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ համաշխարհային հասարակայնութիւնը պահանջում էր պատասխանատուութեան ենթարկել արեւմտահայութեան սպանդը կազմակերպող թուրք ոճրագործներին, որոնց մշակած ծրագրի գործադրմամբ կողոպուտի եւ ոչնչացման է ենթարկուել 66 քաղաքների եւ 2500 գիւղերի հայ բնակչութիւնը, աւերուել են աւելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ ու վարժարաններ, հայ ժողովրդին հասցուած նիւթական վնասը 1919 թ. կուրսով կազմել է մօտ 15 միլիարդ ֆրանկ, իսկ ամենաեղեռնականը՝ 1,5 միլիոն հայ զոհ: Թուրք բարբարոսներին պատժելու պահանջով, դատապարտող սուր յօդուածներով հանդէս եկան, բողոքի ձայն բարձ-

րացրին տարբեր ազգերի քաղաքական, գիտութեան եւ մշակութային ականաւոր գործիչներ՝ Ժակ դը Մորգանը, Յ. Մարկուարտը, Յ. Լեփսիուսը, Ա. Վեգները, Մ. Նիեպագէն, Ա. Մեյէն, Ֆ. Մակլերը, Ռ. Պինոնը, Վ. Բերարը, Ա. Թոյնբին, Վ. Բրիւսովը, Ե. Վեսելովսկին, Ա. Մանդելշտամը, Հ. Մորգենթաուն, Հ. Ադամս Գիբոնսը եւ շատ ուրիշներ:

1933 թուականին Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստների կողմից իշխանութիւնը գրաւելուց յետոյ, այնտեղ բնակուող հայերին նախ եւ առաջ սպառնում էր սեմական ծագման մէջ կասկածը: Այն ժամանակ արգելուած եւ ոչնչացուող գրականութեան ցանկում էին Ֆրանց Վերֆելի «Մուսայ լեռան քառասուն օրը», ինչպէս նաեւ Արմին Վեգների գրքերը, որը տակաւին 1919 թուականին հանդէս էր եկել յօգուտ հայկական ազգային պետութեան ստեղծման: Լաւ տեղեակ լինելով հայերին ոչնչացնելու երիտթուրքերի գործողութիւններին, Ադոլֆ Հիտլերը 1939 թ. օգոստոսի 22-ին Վերմախտի բարձր հրամանատարութեան առջեւ իր ելոյթում հեգնաբար ակնարկեց պետական յանցագործութիւնների հարցում մարդկային խղճի մոռացկոտութեան մասին. «Ես հրաման եմ տուել..., որ պատերազմի նպատակը որոշակի բնագծերի ձեռքբերումը չէ, այլ հակառակորդի ֆիզիկական ոչնչացումը... Ո՞վ է այսօր խօսում հայերի ոչնչացման մասին»:

Աշխարհի համար մէկ փաշիստը երեւի թէ «իրաւունք ունէր» այդպէս յոխորտալու, քանզի Սեւրի պայմանագիրն ստորագրած մեծ տէրութիւնները, որոնք միջազգայնօրէն ճանաչել էին հայ ժողովրդի «դէ-իւրէ» իրաւունքը Արեւմտեան Հայաստանի նկատմամբ, այն հռչակել որպէս «ազատ եւ անկախ պետութիւն», կարճ ժամանակ անց մոռացութեան մատնեցին այդ պայմանագիրը, գործարքի մէջ մտան Անատոլիայում ուժ հաւաքած Մուստաֆա Քեմալի հետ, աչքաթող արեցին նրա ձեռքերը արեւելագաղթ արձակեցին նրա ձեռքերը արեւելահայութեան դէմ:

Այդ տէրութիւններից ոչ մէկը կամք չդրսեւորեց տէր կանգնելու հայերին տուած խոստումներին, ինչը միջազգային իրաւունքի պրակտիկայում նախադէպ կարող էր հանդիսանալ պետականօրէն աջակցող յայտարարութիւնների համար գործուած յայտարարութիւնների համար պատասխանատուութիւն նէ բարոյական պատասխանատուութիւն կրելուն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՈՒՆՆԵՐ

1 Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политархива МИД Кайзеровской Германии. Изд. «Гитуюн» НАН РА, Ереван, 1995, 643 стр.
2 Տե՛ս գրախօսուող ժողովածուն, էջ 36-38:
3 Տե՛ս նոյն տեղում, էջ 210
4 Տե՛ս նոյն տեղում, էջ 161-163:
5 Նոյն տեղում, էջ 38-39, 52-57, 60-65, 67-69:
6 Տե՛ս նոյն տեղում, էջ 174-175, 189-190:
7 Տե՛ս նոյն տեղում, էջ 156-167:
8 Տե՛ս նոյն տեղում, էջ 17:
9 Նոյն տեղում, էջ 54-57, 213-219, 221-225, 285-298:
10 Նոյն տեղում, էջ 22:
11 Նոյն տեղում, էջ 24:
12 Տե՛ս նոյն տեղում, էջ 508-509:

© National Library of Armenia